

Գ. Բ. ԶԼԿՈՒԿՅԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԼԱՆՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Գ. Բ. Չախուկյան**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՐ I**

Երևան  
ԵՊՀ հրատարակչություն  
2015

ՀՏԴ- 811.19(091)  
ԳՄԴ 81.2Հ  
Ձ 229

*Վերադարձության և երաշխավորել  
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը*

**Չահուկյան Գ. Բ.**

Ձ 229 Լեզվաբանության պատմություն/Գ. Բ. Չահուկյան. -Եր.: ԵՊՀ  
հրատ., 2015, հ. I. - 702 էջ:

«Լեզվաբանության պատմության» I հատորը ներառում է լեզ-  
վաբանական ուսմունքների պատմությունը՝ սկզբնավորումից մինչև  
XIX դարի վերջը:

Գիրքը նախատեսված է բանասերների և ընդհանրապես լեզվա-  
բանության հիմնահարցերն ուսումնասիրողների համար:

ՀՏԴ- 811.19(091)  
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2022-9

© ԵՊՀ հրատ., 2015

**Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ**  
**«ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»**  
*(առաջաբանի փոխաբեկ)*

Վաղուց էր զգացվում Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» մեծարժեք աշխատությունը վերահրատարակելու պահանջը: Աշխատությունը լույս էր տեսել մոտ 55 տարի առաջ՝ 1960-62 թթ., երկու հատորով, գիտական աշխատությունների համար ոչ փոքր տպաքանակով (1000 օր.) և անմիջապես արժանացել գիտական հասարակայնության ուշադրությանը: Հրատարակության օրվանից այն սեղանի գիրք է դարձել լեզվաբանական ուսմունքների պատմությանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանությանը զբաղվող մասնագետների համար: Նրան հաճախ են դիմել նաև հումանիտար ոլորտի մյուս գիտաճյուղերի ներկայացուցիչները, որոնց հետաքրքրել են մարդկային լեզվի ծագման, լեզուների ցեղակցության, լեզվի և մտածողության, լեզվի և խոսքի, լեզվի նշանային բնույթի, լեզվափոխակալության հիմնահարցերի և լեզվի կառուցվածքային յուրահատկությունների վերաբերյալ դարերի ընթացքում գիտական, մասնավորապես՝ լեզվաբանական մտքի կողմից արտահայտված տեսակետները:

Այդ ամենի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ կլինեն հետազոտել տարբեր լեզուներով ստեղծված մեծաքանակ գրականություն: Առանց լեզվաբանական ուղեցույցի, որպիսին կարող են համարվել լեզվաբանության պատմության քննական տեսությունները, երբեմն այդպիսի հետազոտությունն էլ ոչ միայն բավարար չէր լինի խիստ բազմազան գաղափարների ու տեսակետների օվկիանոսում կողմնորոշվելու համար, այլև դժվարություններ կհարուցեր նույնիսկ լեզվաբանական մտքի նվաճումներին ոչ լավատեղյակ լեզվաբանի համար:

Յուրաքանչյուր գիտական աշխատանքի արժանիքը առաջին հերթին պայմանավորված է համապատասխան գիտության զար-

գացման համար իր ունեցած ճանաչողական և գործնական նշանակությամբ: Իհարկե, ոչ պակաս կարևոր են այն ժամանակաշրջանը և միջավայրը, երբ և որտեղ ստեղծվել է տվյալ գիտական աշխատանքը: Թվում է՝ գիտությունը այն քիչ ոլորտներից է, որոնք զերծ են հասարակական ազդեցություններից: Իրականում, սակայն, այդպես չէ և այդպես չէ հատկապես հումանիտար գիտությունների ոլորտում: Նույնիսկ այնպիսի գիտության դեպքում, ինչպիսին է լեզվաբանությունը, որը հասարակական բոլոր գիտություններից ամենից շատն է ձգտում ճշգրտության և օրենքների: Ճշմարիտ և մնայուն գիտական արժեք կարող է ներկայացնել այն գործը, որը հնարավորինս զերծ է հիշյալ կարգի ազդեցություններից: Թե որքանով է տվյալ գիտական աշխատանքը նպաստել գիտության համապատասխան ոլորտի զարգացմանը, և որքանով է այն զերծ մնացել իր ժամանակի ոչ գիտական ազդեցություններից, կարող է բացահայտել նախընթաց շրջանում ստեղծված համանման աշխատանքների հետ համեմատությունը: Այդ առումով իր աշխատության ոչ միայն առանձնահատկությունների, այլև արժանիքների իսկական բանալին տվել է ակադ. Գ. Ջահուկյանն իր երկհատոր մենագրության ներածական մասում:

Փոքր-ինչ առաջ անցնելով՝ պիտի ասել, երբ խոսքը Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» մասին է, առանց վարանելու կարելի է կիրառել երկկողմանի համեմատություն, այսինքն՝ համեմատության եզր ընդունել նաև հաջորդող տասնամյակներում (ընդհուպ մինչև մեր օրերը) ստեղծված *լեզվաբանության պատմությունները* և վստահ լինել, որ այսօր էլ այն կլինի շահեկան վիճակում: Ասվածի մասին են վկայում, մասնավորապես, հետևյալ իրողությունները.

**I. Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմությունը»** դասվում է նույնաբնույթ այն սակավաթիվ ուսումնասիրությունների շարքին, որոնք ունեն ժամանակագրական «քիչ թե շատ» ամբողջական ընդգրկում: Այդ կարգի աշխատանքներ հեղինակել են Վ. Տոմսենը, Հ.

Արեւնը, Թ. Միլևսկին և Կ. Ե. Գազկանը, որոնց մեջ որոշակի արժանիքներով առանձնանում են հատկապես Վ. Տոմսենի «Լեզվաբանության պատմությունը մինչև XIX դարի վերջը» (1902) և Թ. Միլևսկու «Ընդհանուր լեզվաբանության ուրվագիծ» (առաջին՝ «Լեզվաբանության տեսություն» մասը) աշխատությունները: Վ. Տոմսենի հիշյալ աշխատանքը լեզվաբանության պատմության ամբողջական շարադրանք կարող է համարվել միայն ժամանակագրական ընդգրկման առումով: Նյութի աշխարհագրական ընդգրկման և խորքային քննության առումներով այն համեմատության եզր անգամ չունի Գ. Ջահուկյանի ուսումնասիրության հետ: Վ. Տոմսենի նշված երկը ավելի շուտ լեզվաբանության պատմության ուրվագիծ է<sup>1</sup>, քան թե ամբողջական պատմություն: Ընդ որում, այն գերծ չէ որոշակի միակողմանիությունից, որի մասին ակնարկել է ինչպես Գ. Ջահուկյանը, այնպես էլ նրանից առաջ ռուս լեզվաբան Ռ. Շորը, որի խմբագրությամբ և հավելումներով լույս է տեսել Վ. Տոմսենի գրքի ռուսերեն թարգմանությունը: Մասնավորապես, Վ. Տոմսենի աշխատանքում ուշադրությունը հիմնականում կենտրոնացվել է հնդեվրոպական լեզուների պատմահամեմատական ուսումնասիրության հարցերի և այդ ոլորտում մեծ վաստակ ունեցող երիտքերականական ուղղության ներկայացուցիչների հայացքների վրա, և դուրս են մնացել ոչ հնդեվրոպական լեզուների քննությանն առնչվող հարցերը: Ըստ Ռ. Շորի, Վ. Տոմսենի աշխատանքում «որոշ չափով գերազնահատվել է» «սկանդինավյան լեզվաբանության» դերը լեզվաբանական մտքի զարգացման գործում և, ընդհակառակը, «լիովին անտեսված է» ռուս լեզվաբանությունը<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Ռուսերեն թարգմանությունը մոտ 159 էջ է՝ Ռ. Շորի հավելումներով հանդերձ, որից առնվազն 60 էջը կազմում են Ռ. Շորի հավելումները: Համեմատության համար նշենք, որ Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» երկու հատորների ընդհանուր ծավալը 1286 էջ է:

<sup>2</sup> Տե՛ս **В. Томсен**, История языковедения до конца XIX века, М., 1938, էջ 5 (ծնթգր. 1):-Ռուս լեզվաբանությանը վերաբերող բացը փորձել է լրացնել Ռ. Շորը ներտեստային համապատասխան հավելումներով: Միաժամանակ, Ռ. Շորը Վ. Տոմսենի

Ըստ էության, Թ. Միլևսկին առաջինն է, որը լեզվաբանական մտքի զարգացումը դիտարկել է ամբողջական ընդգրկումով՝ այն հասցնելով մինչև իր օրերը, բայց դարձյալ սեղմ ծավալի մեջ: Դիշտ է, Գ. Ջահուկյանը որոշակի հիմնավորումներով առարկություններ է ներկայացնում նաև Թ. Միլևսկու տեսակետների դեմ, մասնավորապես՝ նկատելով, որ՝ 1) նրա հայեցակարգը «հիմնվում է Սոսյուրի կոնցեպցիայի անքննադատ յուրացման վրա», 2) նա լեզվաբանական «ուղղությունների խմբավորման և ենթաշրջանների առանձնացման հատուկ միասնական սկզբունքներ չի մշակել»<sup>3</sup>, բայց և այնպես իրողություն է, որ լեզվաբանության պատմագրության մեջ Թ. Միլևսկին առաջինն է փորձել կիրառել լեզվաբանական ուսմունքների դասակարգման և լեզվաբանության պատմության շրջանաբաժանման գիտական սկզբունքներ՝ հաղթահարելով լեզվաբանության պատմությունը *մինչգիրական* (մինչև XIX դարը) և *գիրական* փուլերի բաժանելու ոչ գիտական մոտեցումը:

Ավելի ուշ՝ Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» հրապարակումից շուրջ քսան տարի անց, լեզվաբանության ամբողջական գիտական պատմություն ստեղծելու նախաձեռնությամբ է հանդես եկել ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) բաժանմունքը՝ հեղինակների սովորաբար խմբի մասնակցությամբ սկսելով «Լեզվաբանական ուսմունքների պատմություն» մատենաշարը (առաջին՝ «Հին աշխարհ» հատորի խմբագիրներն էին Ա. Վ. Դեսնիցկայան և Ս. Գ. Կացնելսոնը-1980 թ.), որը, սակայն, մեր տեղեկությունների համաձայն, կանգ է առել չորրորդ՝ «Ուշ միջնադար» հատորի հրատարակությամբ (1991 թ., խմբ. խորհուրդ՝ Ա. Վ. Դեսնիցկայա և Ի. Ա. Պերելմուտեր)<sup>4</sup>: Լեզվաբանության պատմա-

---

սենի գրքին կցել է վերջաբան՝ «Լեզվաբանական ուսմունքների համառոտ ակնարկ՝ Վերածնության դարաշրջանից մինչև XIX դ. վերջը» խորագրով:

<sup>3</sup> Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. I, Ե., 1960, էջ XI:

<sup>4</sup> Այս մատենաշարի «Միջնադարյան արևելք» հատորում տեղ գտած «Լեզվաբանությունը Հայաստանում V-XVIII դդ.» մասի հեղինակը Գ. Ջահուկյանն է (տե՛ս «История лингвистических учений. Средневековый восток», Л., 1981, էջ 7-52):

գրության ուշագրավ փորձեր են նաև Յա. Վ. Լոյսյի «Լեզվաբանական ուսմունքների պատմությունը» (1968) և Ֆ. Մ. Բերեզինի «Լեզվաբանական ուսմունքների պատմությունը» (1975 թ., II վերամշակված հրատ.՝ 1984 թ.), որոնք, սակայն, գրված լինելով դասագրքային չափանիշներով, առնվազն նյութի ընդգրկման տարողությամբ չեն կարող համեմատվել ոչ «Լեզվաբանական ուսմունքների պատմության» վերոհիշյալ մատենաշարային հրատարակության և ոչ էլ Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» հետ:

**II. Նախքան Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմությունը»** (ինչպես նաև՝ դրանից հետո) վիճակը թերևս ավելի բարվոք էր լեզվաբանության պատմության առանձին շրջաններին, առանձին լեզվաբանական ուղղություններին և ազգային լեզվաբանությունների պատմություններին նվիրված հետազոտությունների առումով: Այդպիսի աշխատությունների ոչ ամբողջական ցանկ ներկայացնում է Գ. Ջահուկյանը: Այդ կարգի աշխատանքներից հիշատակելի են, մասնավորապես, Հ. Պեղերսընի «Լեզվաբանությունը տասնիններորդ դարում» (1924), Վ. Պիզանիի «Ընդհանուր և հնդեվրոպական լեզվաբանություն» (1953), Վ. Չվեզինցևի «XIX-XX դարերի լեզվաբանության պատմությունը ակնարկներով և քաղվածքներով» (մաս I, 1964, մաս II, 1965), Յ. Յորդանի «Ռոմանական լեզվաբանություն» (1962, ռուսերեն թրգմ.՝ 1971), Վ. Վ. Վինոգրատովի «Ռուս լեզվաբանական ուսմունքների պատմություն» (1978), «Կառուցվածքաբանության հիմնական ուղղությունները» (1964, պատ. խմբ.՝ Մ. Մ. Գուխման, Վ. Ն. Յարցևա), Լ. Ն. Չաստրինայի «Կառուցվածքային լեզվաբանության ներածություն» (1974), Յ. Կարստի «Հայ բանասիրության պատմություն» (1930), Է. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» (1958-62) ուսումնասիրությունները, որոնցից յուրաքանչյուրը գիտական լուրջ ներդրում է լեզվաբանության պատմագրության մեջ:

Բնական է, որ լեզվաբանության ամբողջական պատմության շարադրանքը լեզվաբանական առանձին ուղղություններին կամ ազ-



գային լեզվաբանություններին վերաբերող մասերով չի կարող լինել այնքան հանգամանալից, որը հատուկ է այդ ոլորտներին նվիրված առանձին ուսումնասիրություններին: Սակայն կասկած չի կարող լինել, որ սեղմ ձևի մեջ էլ Գ. Ջահուկյանի խոսքը միշտ ամբողջական է ու ճշգրիտ: Այդպիսի ամբողջականության նա հասել է լեզվաբանության պատմության վերաբերյալ շատ թե քիչ արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքների և սեփական դիտարկումների հնուտ համադրությամբ: Գիտական խոսքի հստակությունն ու ճշգրտությունը, որն ընդհանրապես բնորոշ է Գ. Ջահուկյան գիտնականի գրչին, լավագույնս դրսևորվել է նաև «Լեզվաբանության պատմության» մեջ: Եթե Գ. Ջահուկյանի երկարատև (շուրջ 60-ամյա) գիտական կենսագրության մեջ պայմանականորեն առանձնացնենք որակական շրջաններ, ապա այս երկհատոր ուսումնասիրությամբ, մեր կարծիքով, սկիզբ է առնում որակապես նոր՝ դեպի գիտության բարձունքները տանող շրջան, որպիսին տրվում է միայն ամենօրյա տքնաջան աշխատանքի շնորհիվ:

**III. Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության»** գլխավոր արժանիքներից մեկը հեղինակի առաջարկված շրջանաբաժանումն է, ըստ որի՝ լեզվաբանության անցած ճանապարհը բաժանվում է երեք հիմնական որակական փուլի. I. Ստատիկ-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (սկզբից մինչև XVIII դարի վերջը), II. Պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման շրջան (XIX դար), III. Միստեմային-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (XX դար): Այս շրջաններից յուրաքանչյուրը նա բաժանում է ենթաշրջանների: Եթե առաջին երկու շրջանների և նրանց ենթաշրջանների տարբերակումը կատարվել է իսկապես խիստ գիտական չափանիշներով, ապա նույնը չի կարելի ասել 3-րդ շրջանի մասին: Մեր համոզմամբ 3-րդ շրջանում երկու հատվածների՝ ա) *նախաստվերական և արյուսասահմանյան լեզվաբանություն* և բ) *սովերական լեզվաբանություն*, առանձնացումը արհեստական է և անխուսափելի տուրք է ժամանակի մտայնությանը այն հիմնավորումով, որ այսպես

կոչված «սովետական (իմա՝ խորհրդային-Վ. Պ.) լեզվաբանությունը» իբրև թե ուներ միանգամայն ինքնուրույն զարգացման ընթացք, այն է՝ ձևավորվում էր «մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայության հիմքի վրա»<sup>5</sup>: «Սովետական լեզվաբանություն» տերմինի տարբերակումն իսկ չի բխում լեզվաբանության շրջանաբաժանման ջահուկյանական սկզբունքներից, բայց դա ԽՍՀՄ-ում իշխող մտայնության դրսևորումն էր, որի հետ չէր կարող հաշվի չնստել ոչ ոք, այդ թվում՝ Գ. Ջահուկյանը: Ըստ էության, առաջին հերթին այդ կարգի երևույթները նկատի ուներ հեղինակը, երբ գրում էր միջանկյալ լուծում պահանջող իրավիճակների մասին<sup>6</sup>: Գիտականության դեմ այդօրինակ մեղանշումներով հանդերձ, հազիվ թե առայսօր կարելի է ցույց տալ լեզվաբանության պատմության ավելի հիմնավորված շրջանաբաժանում, քան Գ. Ջահուկյանի կողմից առաջարկվածն է:

Իհարկե, նախորդ դարի 30-40-ական թթ. եղել են մարքսիստական լեզվաբանական հայեցակարգ մշակելու փորձեր, որի ամենից հայտնի ձախավեր դրսևորումը Ն. Մառի առաջարկած «լեզվի նոր ուսմունքն» էր, սակայն այդ նույն շրջանում էլ շատերն էին հասկանում, որ դա ժամանակի ոչ առողջ իրականությամբ պայմանավորված դրսևորում է: Դիշտ է, 1950-ին «Պրավդայի» էջերում ծավալված լեզվաբանական բանավեճից հետո Ն. Մառի ուսմունքը որակվեց «հակամարքսիստական» և մերժվեց, բայց և այնպես պահպանվեց «ճշմարիտ մարքսիստական ուսմունք» մշակելու մտայնությունը: Իրականությունն այն է, որ իսկական գիտնականներն ընդհանուր առմամբ շարունակել են աշխատել ըստ լեզվաբանական այս կամ այն ուղղության (օր.՝ պատմահամեմատական կամ կառուցվածքային լեզվաբանության) նկատմամբ իրենց ունեցած հակվածության, իսկ մարքսիզմ-լենինիզմի դասականների կամ մարքսիստական լեզ-

<sup>5</sup> Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., հ. I, էջ XXX:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., հ. I, էջ XX: Ի դեպ, խորհրդային լեզվաբանությունը որպես առանձին հոսանք է ներկայացված նաև Յա. Վ. Լոյայի և Ֆ. Մ. Բերեզինի վերոհիշյալ գրքերում, հանգամանք, որը հաստատում է մեր միաբլը:

վաբանության դրույթների վկայակոչումները հաճախ շղարշի դեր են կատարել: Ասվածի վկայություններն են ինչպես պատմահամեմատական լեզվաբանության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը վերոհիշյալ բանավեճից հետո, այնպես էլ կառուցվածքային լեզվաբանության նկատմամբ աճող հետաքրքրությունը 60-ական թթ.: Երևույթը նույնն է կամ գրեթե նույնն է նաև Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» դեպքում. այս աշխատության մեջ ևս վերոհիշյալ բաժանումը, ըստ ամենայնի, անխուսափելի տուրք էր իշխող մտայնությանը և ոչ ավելին: «Սովետական լեզվաբանություն» վերնագրված հատվածում ևս նյութի բովանդակային քննությունը իրականացվել է գիտական մույնպիսի խիստ չափանիշներով և միասնական մոտեցմամբ, ինչ և I հատորում կամ II-ի առաջին՝ «Նախասովետական և արտասահմանյան լեզվաբանություն» հատվածում: Այլ կերպ, եթե հիմնահարցը դիտարկենք խորքային մոտեցմամբ, կտեսնենք, որ այստեղ ևս լեզվաբանության պատմագրությունը գիտականության կորուստ չունի:

**IV.** «Լեզվաբանության պատմության» մեջ հանդիպող բազմաթիվ օտարաբան տերմիններ, որոնց գործածությունը սովորական էր մինչև նախորդ դարի 70-ական թթ., վաղուց դուրս են եկել գործածությունից: Դրանցից են՝ *ֆիլոլոգիա* (=բանասիրություն), *դիսկուսիա* (=բանավեճ), *սիսրեմ* (=համակարգ), *սիսրեմավորում* (=համակարգում), *կոնցեպցիա* (=հայեցակարգ), *ֆունկցիոնալ* (=գործառական), *էվոլյուցիոն* (=բարեշրջական), *դիսցիպլին* (=գիտակարգ), *բիբլիոգրաֆիա* (=մատենագիտություն), *տրադիցիոն* (=ավանդական), *մեթոդոլոգիա* (=մեթոդաբանություն) և այլն: Որոշ դեպքերում հեղինակը օտար ձևի կողքին առաջարկում է հայերեն համապատասխանը (հմմտ. *տելեոլոգիական (նպատակաբանական)*) կամ զուգահեռաբար գործածում է օտար և հայերեն տարբերակները (հմմտ. *շրջանաբաժանում* և *պերիոդիզացիա*): Այս երևույթը վկայում է այն մասին, որ տվյալ ժամանակաշրջանի գիտական գրականության մեջ հանդիպող օտար բառերի, մասնավորապես՝ տերմինների գործածու-

թյունը սովորական երևույթ է եղել և, ընդհակառակն, գործածական չեն եղել դրանց հայերեն համարժեքները: Թերևս Գ. Ջահուկյանը առաջիններից էր, որ առանձին դեպքերում առաջարկել է օտար տերմինների հայերեն համարժեքներ (ինչպես վերը բերված օրինակում)՝ հավանաբար նկատի առնելով, որ օտար ձևը նույնպես նորություն է հայ իրականության մեջ և բացատրության կարիք ունի:

V. «Լեզվաբանության պատմության» առաջին էջերից մինչև վերջին էջերը ներկայացվող նյութի նկատմամբ առկա է Գ. Ջահուկյան գիտնականի քննական հայացքը, որն առանձին դեպքերում կարող է չափից ավելի խիստ թվալ, իրականում, սակայն, հեղինակի կողմից որդեգրված միասնական աշխարհայացքի հետևողական կիրառման և գիտական բարեխղճության արդյունք է: Այդ աշխարհայացքը պաշտոնապես մատերիալիստական-դիալեկտիկականն է: Այսօր դժվար է ասել, թե Գ. Ջահուկյանն իրականում ինչպես է վերաբերվել այդպիսի աշխարհայացքի գոյությանը, բայց ակնհայտ է, որ փիլիսոփայական հաճախ շատ տարբեր հայեցակարգային հիմքերի վրա կառուցված լեզվաբանական տեսությունների նկատմամբ վերաբերմունքը նա փորձել է հավասարակշռել գնահատման միասնական չափանիշների կիրառումով: Անշուշտ, «Լեզվաբանության պատմության» մեջ տեղ գտած հեղինակների ու տեսությունների նշանակությունը լեզվաբանական գիտության զարգացման համար նույնը չէ և չի էլ կարող նույնը լինել: Ուստի բնական է, որ լեզվաբանության պատմությունը քննող հեղինակը, որի պատկերացումը դիտարկվող իրողությունների մասին ավելի խորքային է, քան մեկ ուրիշինը, ունենար նաև իր նախապատվությունները: Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմության» արժանիքներից մեկն էլ այն է, որ նրանում տեղ գտած գնահատականները զերծ են զգացական երանգավորումներից. դրանք բացառապես պայմանավորված են դիտարկվող նյութով, այն է՝ արտահայտված տեսակետներով ու գաղափարներով և լեզվաբանության համար դրանց ունեցած նշանակությամբ: Այս առումով, իհարկե, համեմատության որևէ եզր չի կարող

լինել ԽՍՀՄ-ում 1930-ական թթ., այսպես կոչված, «բուրժուական» համարվող ուսմունքների նկատմամբ եղած վերաբերմունքի և 60-ականներից հետո ձևավորված վերաբերմունքի միջև: Համեմատության համար կարելի է նկատի ունենալ, օրինակ, ամերիկյան էթնոլեզվաբանության վառ ներկայացուցիչ Է. Մեյիթի «Լեզու» արժեքավոր աշխատության ռուսերեն հրատարակությանը (1934) կցված ներածական խոսքերում<sup>7</sup> և նույն աշխատության մասին Գ. Չահուկյանի «Լեզվաբանության պատմության»<sup>8</sup> մեջ տրված գնահատականները: Ըստ էության, խորհրդային գիտական իրականության մեջ Գ. Չահուկյանի «Լեզվաբանության պատմությունը» առաջիններից էր, որը գերծ էր ոչ գիտական որակումներից:

**VI. Գ. Չահուկյանի «Լեզվաբանության պատմությունը», մասնակի դիտողություններով հանդերձ<sup>9</sup>, բարձր են գնահատել առաջին**

---

<sup>7</sup> Հմմտ. **С. Белевицкий**, Предисловие // **Э. Сепир**, Язык, М.-Л., 1934, էջ V-IX, -**А. Сухотин**, Эдуард Сепир и его место в лингвистике, նույն տեղում, էջ X-XX: Մասնավորապես Ա. Սոխոտինի վերլուծությունից առաջացող տպավորությունն այն է, որ Է. Մեյիթի գրքի երկու գլխավոր արժանիքները «Էկզոտիկ» (իմա՝ հնդկացիական) լեզուների նյութի օգտագործումն է և դրանով պայմանավորված՝ լեզուների տիպաբանական դասակարգման նոր՝ «կոնցետուալ» (իմա՝ հասկացական-Վ. Պ.) հայեցակարգի առաջարկումը:

<sup>8</sup> Տե՛ս **Գ. Բ. Չահուկյան**, նշվ. աշխ., հ. II, 1962, էջ 131-137:

<sup>9</sup> «Вопросы языкознания»-ում լույս տեսած գրախոսության հեղինակ Ա. Մովսեսյանը ճիշտ չի համարել «Սովետական լեզվաբանությունը» ժամանակագրական սկզբունքով շրջանաբաժանելը, որովհետև այդ դեպքում, օր., Լ. Շչերբայի և Ե. Պոլիվանովի աշխատությունները Ն. Մառի «լեզվի նոր ուսմունքի» հետ վերագրվում են նույն ժամանակահատվածին (տե՛ս **А. И. Мовсесян**, *Г. Джаукян*, История языкознания // «Вопросы языкознания», 1965, էջ 136): Այդուհանդերձ, Ա. Մովսեսյանը ևս Գ. Չահուկյանի սույն աշխատությունը գնահատում է որպես «լեզվի մասին գիտության պատմությունն ընդհանրացնող առաջին լուրջ փորձը», որում «արված է լեզվաբանության պատմության շրջանաբաժանման արդյունավետ սկզբունքներ մշակելու առաջին քայլը» (նույն տեղում, էջ 137): Ինչպես արդեն նշել ենք, «Սովետական լեզվաբանության»՝ որպես լեզվաբանական ինքնուրույն հոսանքի առանձնացման դեպքում, ըստ էության, անխուսափելի էր դառնում ժամանակագրական չափորոշիչի կիրառումը, որի մեղքը ոչ թե Գ. Չահուկյանինն է, այլ իր ապրած ժամանակաշրջանինը: Սակայն, դրանով հանդերձ, Գ. Չահուկյանը «լեզվի նոր ուսմունքին» չվերաբերող լեզվաբանական հայեցակարգերը, որոնց թվին են դասվում նաև Լ. Վ. Շչերբայի և Ե. Գ. Պոլիվանովի լեզվաբանական աշխատությունները,

հրատարակության գրախոսները: Ըստ էության, այդպիսի գնահատականի դրսևորումն է այն, որ ինչպես հայկական, այնպես էլ ռուսական գիտական հանդեսներում տպագրված գրախոսությունների հեղինակները անհրաժեշտ են համարել այդ մենագրության հրատարակությունը ռուսերենով<sup>10</sup>, որով այն մատչելի կդառնար ոչ միայն նախկին ԽՍՀՄ գիտական հանրության համար, այլև նրա սահմաններից դուրս: Պիտի ավստոսալ միայն, որ տաղանդավոր գիտնականն այդ ուղղությամբ գործնական քայլեր չի ձեռնարկել:

Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմությունը» ոչ միայն հեղինակի գիտական ժառանգության կարևոր ձեռքբերումներից է, այլև հայ լեզվաբանական մտքի անանց արժեքներից մեկը, որի գիտական նշանակությունը դժվար է գերազնահատել առհասարակ լեզվաբանության պատմության մեջ: Հայ լեզվաբանների մի քանի սերնդի համար այն եղել է լեզվաբանության ամբողջական պատմությանը ծանոթանալու անվտխարիների ու հեղինակավոր աղբյուր և մինչև օրս էլ մնում է իր տեսակի մեջ չգերազանցված աշխատանք հայ լեզվաբանության մեջ (և կարծում ենք՝ ոչ միայն հայ լեզվաբանության մեջ): Կիրառված սկզբունքներով և նյութի խորքային վերլուծության ու իմաստավորման աստիճանով այս մեծարժեք աշխատությունն իրականում ավելին է, քան պարզապես լեզվաբանության պատմությունը. այն **լեզվաբանության պատմության քննական տեսություն է:**

#### **Վ. Զ. Պեպրոսյան**

*ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության  
ամբիոնի վարիչ*

---

խմբավորել է «Այլ կոնցեպցիաներ» խորագրի տակ՝ այդպիսով շեշտելով դրանց ինքնուրույնությունը:

<sup>10</sup> Տե՛ս **Հ. Պեպրոսյան, Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն** // «Պատմաբանասիրական հանդես», 1964, No. 4, էջ 242,- **А. И. Мовсесян**, նշվ. աշխ., էջ 137:









ԵՐԵՎԱՆԻ ԳԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԷՐԱՆ

Գ. ԶԱՀՈՒԿԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
Գ Ա Տ Մ ՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Ի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԷՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՐԱԹՎՈՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ — 1960

### ՀՐԱՏՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵՄԱՆ ԿՐՆՆԵՐ

Երկու անգամ ընթացող ժամանակահատվածում է երկու հասարակ, որոնցից անտեղի են ընդգրկում և ճիշտ ժամանակներին միջև ԽԽ դասի վերին ընկած զբաղմունքը: Երկուսից էլ իր զարգացման (հետադարձ) նաև հարմարանքները (լեզվաբանություն):

Գրքերի նախատեսված է բանաստեղծական ֆակուլտետների ստանդարտի, առարկաների և յնչնանհատկանքները (լեզվաբանություն) նախատեսված է հարմարանքները նախատեսված է:

Հրատարակվում է  
Երևանի Պետական համալսարանի  
Խմբագրական-հրատարակչական խումբի  
օրգանակ

**Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**



## 1. ԼԵՉՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՄ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության պատմությունը և նրա սուսումնասիրությանն  
հարցերը.— Լեզվաբանության պատմությունը լեզվաբանական  
կարևորագույն դիսցիպլինաներից մեկն է, որ կազմում է ֆիլոլոգիա-  
կան մասնագիտական կրթության անհրաժեշտ մասը: Զնայած  
սրան՝ մինչև այժմ գրեթե չկան լեզվաբանության պատմության  
այնպիսի ամբողջական շարադրանքներ, որոնց մեջ տրվի այդ գի-  
տության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը՝ տարածական  
քիչ թե շատ լայն ընդգրկմամբ: Մասնավորապես չկան լեզվաբա-  
նության պատմության բուհական այնպիսի դասագրքեր, որոնք վեր-  
հանեն լեզվաբանության պատմության գլխավոր մոմենտները՝  
մեթոդոլոգիական ճիշտ մեկնաբանությամբ: Ինչպես ցույց տվից  
«Вопросы языкознания» ամսագրի էջերում 1954—1955 թթ.  
քաջգամ դիտելուհան, բաշակույթում են այդ առարկայի վերաբերյալ  
ժխտական կարծիքներ, երբի սխառմագրության ու շրջանաբա-  
ժանման միասնական ըմբռնումներ: Փորձը դժվարանում է և  
նրանով, որ առանձին լեզվաբանական ուղղությունների և լեզվա-  
բանների գեահատման հարցում դոյություն ունեն տարակարծու-  
թյուններ, որոնք մասամբ էլ պայմանավորված են մեր երկրում  
լեզվաբանական գիտություն անցած նանապարհի առանձնահատ  
կություններով:

Լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատություն-  
ները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ ըստ դրանց ընդգրկման,  
բնույթի ու նպատակների:

Լեզվաբանության պատմության ամբողջական շտաբգում-  
ները.— Մի խումբ են կազմում լեզվաբանության պատմության  
քիչ թե շատ ամբողջական շարադրանքներ՝ ժամանակագրական

ստորբեր ընդգրկումներով: Մրանց մեջ առաջին հերթին հիշատակելի է գանխացի գիտնական Վ. Տոմսենի (1842—1927) սելեզվարանության պատմությունը մինչև XIX դարի վերջը՝ աշխատությունը, որը ներկայացնում է Կուպինհացնում նրա կարգացած սելեզվարանության ներածությունն զարնթացի համապատասխան բաժնի վերամշակումը և հրատարակվել է 1902 թ.: Այդ աշխատությունը թարգմանվել է ռուսերեն և հրատարակվել 1938 թ. Թ. Օ. Շորի հավելումներով ու վերջաբանով: Վերջաբանը, որի մեջ սրվում է լեզվաբանական ուսմունքների համառոտ պատմությունը վերածնության դարաշրջանից սկսած, որոշ վերամշակումով (սելեզվարանության պատմության ուրվագիծն՝ վերնագրի տակ) հետագայում մտել է Թ. Օ. Շորի և Ն. Ս. Զեմեդակովի սելեզվարանության ներածությունն՝ բուհական դասագրքի մեջ<sup>1</sup>: Իր թուրք սրժանիքներով հանդերձ՝ Տոմսենի աշխատությունը ունի մի շարք նշանակություններ և արդեն հնացել է. նախ՝ հնչյունակը տալիս է գրեթե միայն արևմտահարավային լեզվաբանության պատմությունը՝ բացառություն անելով միայն Հնդկաստանի համար, որքանով որ հնդկական լեզվաբանությունը կարևոր դեր է խաղացել պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման համար. երկրորդ՝ այս գնաբում էլ Տոմսենը XIX դարի լեզվաբանության պատմության շարադրանքը տալիս, ուշադրությունը կենտրոնացնում է հնդկությունական լեզուների բառամասերության հարցերի վրա՝ գրեթե զանց առնելով մյուս լեզվախմբի ռուսականությունը և անընդուն սեղ հատկացնելով ընդհանուր լեզվաբանությանն ու լեզվաբանական կարևորագույն հասանքների տեղական հիմունքների բնութագրմանը. երրորդ՝ չհնչելով տիպիկ երկսեռական և էմպիրիկ գիտնական՝ Տոմսենն ակնհայտ առավելություն է տալիս լեզվաբանական մեթոդի զարգացման հարցերին՝ լեզվաբանական տեսությունն վարչացման հարցերի հանդեպ: Այս բոլորին միանում է և այն, որ մի կողմից՝ Տոմսենի գիրքը հանդես գալով XX դ. սկզբներին, իր վրա կրում է XIX դ. պատկերացումների կնիքը, մյուս

<sup>1</sup> В. Томсен, История языковедения до конца XIX века (краткий обзор основных моментов), перевод студента в обработке и послесловии Р. О. Шора (Краткий очерк истории лингвистической науки с эпохи возрождения до конца XIX века). М., 1938.

<sup>2</sup> Р. О. Шор и Н. С. Чешодамов, Введение в языковедение, М., 1946, т. 2 228—277.

կողմից՝ այդ գրքից ամբողջովին դուրս է մնացել XX դարը, որի պատմությունը պակաս հետաքրքրություն չի ներկայացնում:

Հնդվարանությունը պատմությունը հիմքված նորագույն բուսականախոսություններից առանձին հիշատակություն արժանի են Հանս Արենսի և Քալեբոչ Միլեւսկու աշխատությունները: Իրանցից առաջինը՝ ունի ժամանակային լայն ընդգրկում՝ անտիկ աշխարհից մինչև մեր օրերը, բայց նրա տարածական ընդգրկումը նեղ է, այն սահմանափակվում է միայն Էվրոպական և նորագույն ամերիկյան լեզվաբանություն: Արենսը գրեթե որևէ տեղեկություն չի տալիս հնդկական լեզվաբանության մասին, որը ոչ միայն աչքի ընկնող նվաճումների է հասել հնդկական լեզուների ուսումնասիրության բնագավառում, այլև կարևոր դեր կատարել պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորման մեջ, իհարկ համադրել հիշատակություն է արվում միայն Պանինիի մասին, այն էլ XIX դարի լեզվաբանության ձևավորման նախադրյալների թնտամյան հետ կապված: Քոլորովին զանց են առնվում շինացիների, ևսպոնացիների, արարենների և այլ ժողովուրդների լեզվաբանական նվաճումները լեզվաբանության պատմության պնդիոցիզացիան ներկայում կատարում է որակիցիտն ձևով՝ տարբերելով «լեզվաբանություն քարածրուցում» (մինչև XIX դարը) և «լեզվաբանություն» շրջաններ: Մինչև XIX դարը ընկած շրջանն, այսպիսով, նա բուն լեզվաբանության շրջան չի համարում: Այլ բոլոր դեպքերում է Արենսը լեզվաբանական ուղղությունների և առանձին հնդկականների կոնցիպցիաների հանգամանաչից թնտամյան կատարում, նա սովորաբար բովարարվում է ներածական դիտողություններով և ապա ընդարձակ քննարկներ է բերում թնտամյան հնդկականներից, սրտնով աշխատությունը դառնում է ընդարձակ թանթություններով օժտված քրեատմատիա:

Ավիտոյ յե նշել, որ XX դարի լեզվաբանությունը բնավում է ոչ թե ըստ լեզվաբանական ուղղությունների ու կոնցիպցիաների, այլ ըստ առանձին երկրների:

Քալեբոչ Միլեւսկին իր «Լեզվաբանությունը լեզվաբանության ուղղագծի առաջին մասում (լեզվաբանություն տեսություն)»<sup>2</sup>, որտեղ

<sup>1</sup> H. A r e n s, Sprachwissenschaft, Der Gang ihrer Entwicklung von der Antike bis zur Gegenwart, Freiburg - München, 1935.

<sup>2</sup> T. M i l e w s k i, Zarys językoznawstwa ogólnego, cz. I, Teoria językoznawstwa, Lublin - Krakow, 1917. Այս աշխատությանը մենք ծանոթացել ենք մեր շարագրանքը հիմնականում ուղարկելուց հետո և պետք է



աաւրիս է շեղմարտեական ռումուլներին պատմական տեսութիւնը, շեղմարտեական պատմութեան իր դասակարգումը ճիշմնում է շեղմի քննութեան հրկու հետազոտ հայեցակետերի տարբերման վրա՝ ֆունկցիոնալ և էվոլյուցիոն: Ֆունկցիոնալ հայեցակետ անելով նա հասկանում է շեղմի քննութեանը՝ մարդկային տվյալ հասարակութեան մեջ նրա կատարած ֆունկցիայի (իմա՝ հարգարգակցական ֆունկցիայի) առումով: էվոլյուցիոն հայեցակետը շեղմի քննութեանն է՝ նրա ծաւալան և հետագա ձևափոխութեան առումով: Ինչպէս հայեցակետը Միլեակին համարում է տելուրոգիական (նպատակաւորական), որովհետև այս դեպքում որոշմում է այն նպատակը, որին ծառայում են տվյալ շեղմի ձևերը, իսկ էրկուրդը՝ պատճառական (իմա՝ դետերմինիստական), որովհետև այս դեպքում վերլուծում են այն պատճառները, որոնք հանգեցնում են տվյալ ձևերի հանդես գալուն: Էվմի ֆունկցիոնալ քննութեանը նա միաժամանակ համարում է քննութեան հասարակութեան դիրքերից, էվոլյուցիոնիստական քննութեանը՝ քննութեան անհատի կիրքերից: Ֆունկցիոնալ քննութեան, ըստ Միլեակի, տելուրոգիականի և հասարակականի հետ միասին եակ ֆունկցիոնալիզմական քննութեան է, որի դեպքում շեղմը փորձում են հասկանալ որպես գոյութեան ունեցող արշնկտ: էվոլյուցիոն քննութեանը պատճառականի և անհատականի հետ միասին հոգեբանական քննութեան է, այս դեպքում աշխատում են շեղմի հասկանալ անհատական կործի ճանապարհով: ֆունկցիոնալ և էվոլյուցիոն հայեցակետերը, ըստ Միլեակու, պարզապէս են հրկու մակարդակով՝ նկարագրական և համեմատական: Միլեակին տարբերում է շեղմարտեական պատմութեան 3 շրջան՝ նկարագրական-ֆունկցիոնալ (մինչև 1800 թ.), համեմատական-էվոլյուցիոն (XIX դ.) և համեմատական-ֆունկցիոնալ (XX դ.): Ենչի է, սակայն, որ Միլեակին, ի հակասութեան այս դասակարգման, շարունակելով տրագիցիոն կերպով XIX և XX դարերը միավորել մի ընդհանուր ընդ (ՌՕՈՒՐՈ) շեղմարտեական տեման տակ՝ XX դարը դիտում է որպես երկ շեղմարտեական շրջաններից մեկը: Ինչպէս դեպքում XIX—XX դդ. համար նա ընդհանուր առմամբ տարբերում է 3 շրջան՝ 1800—1870 թթ.,

Նշենք, որ շեղմարտեական պատմութեան շրջանների առանձնացման հարցում նրա գրքի և երկու գրքի միջև բնութագրական դա, թեև մեծ համաձայն չենք ոչ Միլեակու պահանջարկային սկզբունքներին, ոչ էլ այլ վարդի գրքումներին: այլ թվում՝ շեղմարտեական գիտելիքները նրա գրքում շեղմարտեական հարցերի մեկնարկութեանը և այլն:

ՃԻՃ ղ. վճարչին երեսնամյակը և ՃԿ դարը. Մի աչլ ղնպրում, սահասն, երիտօրուկաններին տիրապետութեան շրջանը նա հասցնում է մինչև 1914 թիվը:

Սքն փորձնը որոշ ընդհանուր եկրտկացութեաններ աւելչ, ազա Միլենկու կոնցնպցիայի մասին կարելի է նշիչ հետևյալը. 1) այն հենվում է Սասյութի կոնցնպցիայի անցնեադատ յուրացման վրա, ընդ որում Միլենկին խիտ կհրպով հակադրում է նախ՝ ֆունկցիոնալ ու պատմական հայնցակետերը և երկրորդ՝ շնդուն ու խուարը՝ որպես հասարակական և անհատական երևութեաներ: 2) Իրականում ղնվի պատմական քննութեանը կարող է ղինել ոչ միայն անհատական-հոգիքանական, այլև հասարակական-հասարակագիտական, պատմական քննութեան երիտընդեանական և ղանական, որը նկատի է աւելում Միլենկին ղն եզրտկացութեանների համար, ղիակը ղն: 3) Միլենկին նախ՝ անհրամբշտ ղափով հարչի ղի աւելում նկարագրական և եորմատիվ քննութեան տարրերութեանը՝ մինչև ՃԿ ղ. ղնկած ղրջանը կոչելով նկարագրական, և երկրորդ՝ անհրամբշտ ղափով ղի տարրերում ՃԿ դարը մինչև ՃԿ ղարն ղնկած ղրջանից: ՃԿ դարի ղնվարանութեան միակ տարրերութեանը վերչինից համարվում է նկարագրական տարրի եւրմատմը. էլ ղենք խուում այն մասին, որ ՃԿ դարը նա ղիտում է միակողմանիորեն՝ միայն մեկ ուղղութեան (Խուշութի ու նրա որոշ հիտերոքներին) ղերքերից: 4) Ինվարանական ուղղութեաններին ղմբալղորման և նկնոչրաններին աւանտնացման հասուկ միասնական սղըրունքներ Միլենկին ղի մշակել. այսպիս, մինչև ՃԿ դարն ղնկած ղրջանի նյութը նա քննում է «շեղական ղպրոց», ուուեանական ղպրոց», սեւտինական ղպրոց, սիրարական ղպրոց», սնդրուակուկն ղպրոց» անունների տակ, ՃԿ ղ. նյութը՝ «Բոպպ և Էուսրոչուս», «Փրիմի ղպրոց», սնվզուսա Ելայիւեր», սնրիտքերականական ղպրոցի ղրոքննը, ոււյունական սրենքների բացաութեան ղնանաչելը, սնեայոպիա», սնրիտքերականների ղարաչյուսական ուսումնասիրութեանները, սնիզվարանական աշխարհագրութեան սնունների տակ, ղակ ՃԿ ղ. նյութը՝ «էթուկսիսուղոքական ղպրոց» (Կուրո և Կասիերը), սնիզդիւեանղ ղր Սասյութ», «Էնյունաքանութեան և հիւյնքարանութիւն», «Սեւահիւյնքարանութեան», «Ձեարանութեան և ղարաչյուսութեան», սնիզվարանական սնարանութեան և ղրական սնարանութեան», սեարչ Բյուլեր» անունների տակ: Իւֲխասութեան ղորրորդ մասը նվիրված է ղնվարանական ղիսղիպչիւններին և բաժինների գասակարգմանն ու բնութագրմանը:

Նեղգրաքանութեան գիտական հանգամանաչից պատմութիւնը չի նկատուց շատ հետու է Կ. Ս. Գաղկանի «Նեղգրաքանութեան պատմութեան վերաբերյալ դասախոսութիւնները դասընթացը»<sup>1</sup>, որը, սակայն, կարող է օգտակար չի նկատուի այդ բնագաղափարի հարկանական ծանոթութեան համար:

Աղբարանութեան պատմութեան ստանձնին շրջաններին Ալիքոված աշխատութիւնները.— Զգուի թիվ են կազմում Նեղգրաքանութեան պատմութեան այս կամ այն շրջանին նվիրված աշխատութիւնները: Նեղգրաքանութեան պատմութեան հին շրջանը արտացոլել է անտիկ և հնդկական չեղգրաքանութեանը նվիրված աշխատութիւններում: Անտիկ Նեղգրաքանութեան պատմութիւնը տվել է Լ. Շտայնթալը իր «Հուսնները և հումայիցիները Նեղգրաքանութեան պատմութեանը» աշխատութեան մէջ (1883)<sup>2</sup>, հնդկական Նեղգրաքանութեան պատմութեանը շարադրված է Ս. Կ. Քիչմարկարի «Հաշիվատիւթեան սանկրիտական քերականութեան» դրամութեան ունեցող տարրերը սխառնմաները մասին» (1915) և Պ. Զակրիարտի «Հնդկական Նեղգրաքանական հայացքները» (1933) գրքերում<sup>3</sup>, Միչեսլաւարցյան Սիմոնի Նեղգրաքանական ստանդարտները ստանդարտութեան առարկա են դարձել Ս. Քյուրոյի «Ներառութիւններ և բաղվածքներ տարրեր լատինական ձեռագրերից» որպէս միջնորդարցյան քերականական դպրոցիաների պատմութեան Նյութ» (1868), Յ. Քիչմարկարի «Միչեսլաւարցյան լատինական քերականութեան պատմութեան ստանդարտները» (1885), Պ. Մոտոյի «Քաղաքականական և սխառնական Նեղգրի փիլիսոփայութիւնը» (1919), Յիլլեդի Սիլարները քերականական դպրոցները» (1952), Գիլգասի «Ներառութիւն քերականական սխառնութիւն ստանդարտ» (1873) գրքերում և բաղված

<sup>1</sup> К. Е. Галганов. Курс лекций по истории языкознания, Одесс, 1957.

<sup>2</sup> H. Steinthal, Geschichte der Sprachwissenschaft bei Griechen und Römern, Berlin, 1863.

<sup>3</sup> S. K. Belvaskar, Account of the Different Existing Systems of Sanskrit Grammar, Poona, 1915. P. Chakravarti, The Linguistic Speculations of the Hindus, Calcutta, 1933.

<sup>4</sup> C. F. Brugot, Notices et extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire des doctrines grammaticales au moyen âge, Paris, 1868. J. Häkkel, Beiträge zu einer Geschichte der lateinischen Grammatik im Mittelalter, Halle, 1865. P. Rotta, Filosofia del linguaggio nella patristica e nella scolastica, Torino, 1900. G. Flügel, Die grammatischen Schulen der Araber, 1892. Гилганов, Очерк грамматической системы арабов, СПб, 1878.

Քի՛վ այլ գործերում, որոնք վերաբերում են տառնա՛խ երկրների լեզվաբանությունների պատմությանը: Վերջիններս անհրաժեշտություն դեպքում կհիշատակվին ներկա աշխատության համապատասխան հասվածներում:

XIX դ. լեզվաբանության պատմությունը արտացոլված է Հ. Պեդերսենի *Օւհզզաբանությունը տառնիներորդ դարում աշխատության մեջ* (1924)<sup>1</sup>: XIX դ. լեզվաբանական ուսմունքների պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ առանձին հիշատակության արժանի է Վ. Պրահնիի *Ունգարուր և հնդեւրոպական լեզվաբանությունը*, որտեղ արված է 1935—1950 թթ. լեզվաբանական աշխատությունների տեսությունը<sup>2</sup>: Քենվենտուր Տեոտալիերի *Օմարտական լեզվաբանության ուսումնասիրության ձեռնարկը* / մասը՝ նվիրված է XIX դ. լեզվաբանության մի շարք այնքան կնկնող դեմքերի քննությանը, ինչն մի կողմ թողնենք Հափելա՛նում բնագոյ իտալացի լեզվաբաններին (Վինչենցո Կրեչինի և Կլաուդիո Զակոմինո), որոնք առանձին դեր շն կատարել լեզվաբանության պատմության մեջ, ապա մնացած նյութը նվիրված է մի շարք խոշոր լեզվաբանների, որոնց հայացքների քննության հետ կապված՝ քաջահայտվում են պատմա-համեմատական լեզվաբանության կարևոր հարցերը՝ ունեմատական մեթոդի հիմքերը—Ռուպրո, Ունգարանուր լեզվաբանության ակունքները—Ուլիսեիս, յլեզվաբանական հնարանություն—Ասկարիս, ունեմատական մեթոդի սահմանները—Մեյեռ-Լյուրիշ և Մեյես, յլեզվաբանական աշխարհագրություն—Ժյուլյենուս և ունեմատական մեթոդի քննադատությունը—Նովաուդոս: Ինչպես տեսնում ենք, հեղինակների ընտրությունը ոչ միշտ է որոշվում երանց ինդիանուր արժեքով, ընտրվում են (բացի Ռուպրից) գերազանցապես ունեմատության հետ սերտորեն կապված հեղինակները:

Սովետական իրականության մեջ նման բնույթի աշխատություններ են Վ. Լ. Զվեզդինցկիի *«XIX—XX դարերի լեզվաբանության պատմության քննատմատիպ»,* որտեղ բերված էյուզմերին ոչ

<sup>1</sup> H. Pedersen, *Sprogvidenskaben i det nitende aarhundrede*, København, 1924 (անգլ. թարգմ. *Linguistic Science in the Nineteenth Century*, Cambridge, U. S. A., 1931).

<sup>2</sup> V. Prazel, *Allgemeine und vergleichende Sprachwissenschaft*, WF. II, 1953 (որտե թարգմ. В. ПРАЗЕЛ, *Общая и сравнительная языковедение*, համաձայն ժ-գրությունի, М., 1951).

<sup>3</sup> B. Ferrarini, *Guida allo studio della linguistica storica*, 1, *Profilo storico-critico*, Roma, 1949.

միայն կցված հն եհրածական գիտություններ, այլև սրված է մինչև XIX դարի լեզվաբանության պատմության համառոտ ուղիգիծը, և Տ. Ա. Գեղանքնայի սկզբաբանական ուսմունքների համառոտ տեսությունը (XIX—XX դդ. նվարդարում)։<sup>1</sup>

Լեզվաբանության պատմության հարցերը բնիկաներ լեզվաբանական աշխատություններում առ ձեռնարկներում։— Առանկի՞ն հիշատակության արժանի են լեզվաբանության պատմության այն շարադրանքները, որոնք սրված են լեզվաբանական աշխատություններում, դասագրքերում ու ձեռնարկներում։ Ընդհանուր լեզվաբանության, լեզվաբանության եհրածության և լեզվագիտության հիմունքների թիշ թիշ շատ ամբողջական շարադրանքներ ձեշ սօխրարար տեղ է տրվում լեզվաբանական ուսմունքների պատմությանը՝ կամ ամբողջականորեն, կամ որևէ մասնակի հարցի կապակցությամբ, հաճախ էլ և՛ այս, և՛ այն դեպքում։ XX դարի նման տիայի աշխատություններից կարելի է նշել հետևյալները՝ Օ. Խապրանի սկզբուն, նրա թեոսիանը, զարգացումը և ծագումը (սկզբաբանական գիտության պատմությունը ու ըստիւր), Է. Քյուսմ-Ֆիլիի սկզբուն, Է. Զ. Գրեյի սկզբի հիմունքները (սկզբի ուսումնասիրության պատմությունը» զլուխը)՝ և այլն, որա լեզվաբաններից նշելի են Է. Պրոնգիեևիկու սկզբաբանության եհրածությունը» (սկզբաբանության պատմության հիմնական մոտենումները զլուխը), Ա. Է. Պոզոգիևի սկզբուն որպես ստեղծագործություն գիրքը (սրված է լեզվի ծագման տեսությունների գրեթե սպառելի շարադրանքը), Մ. Ն. Պետերսևի սկզբաբանություն եհրածությունը, Բ. Օ. Երրի և Ն. Ա. Զեմոգանովի՝ վերևում հիշատակված գիրքը, Ա. Ա. Ռեֆորմատսկու սկզբաբանության եհրածությունը» (ուսանի՞ն հարցերի թեևության եհրածականները)՝, հայ իրակա-

<sup>1</sup> Хрестоматия по истории языковедения XIX—XX веков, составлена В. А. Зегинцев, М., 1954. Т. А. Дегтерева, Краткий обзор лингвистических учений (в XIX—XX ввках в Европе), «Проблемы научения языка», М., 1957.

<sup>2</sup> O. Jaeger, Die Sprache, Die Sprache, Development and Origin, London, 1922 (գերմ. թարգմ. Die Sprache, ihre Entwicklung und Natur, Heidelberg, 1925). L. Bloomfield, Language, 1933. C. H. Osgood, Foundations of Language, New York, 1939. II հրատ. 1940.

<sup>3</sup> В. Поржевичский, Введение в языковедение, М., 1910. А. Л. Потодан, Язык, как явление, Харьков, 1914. А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1955. М. Н. Петерсон, Введение в языковедение, М., 1959—62. II հրատ. 1959—62. III հրատ. 1962.

նության մեջ՝ Գ. Մենելիշյանի «Երգի լեզվաբանությունը» (Վրեն-նա, 1956), Հ. Անաոյանի «Լրակատար թերախառնություն հայոց լեզվի» աշխատության առաջին գիրքը («Ենթաօբյեկտներ», Երևան, 1955), Է. Բ. Ադամյանի «Լեզվաբանության ենթաօբյեկտներ» (Երե-վան, 1957) և այլն:

Մասնակի և առանձին լեզվաբանությունների պատմությունը նվիրված աշխատությունները.—Մի մեծ խումբ են կազմում մաս-նակի լեզվաբանությունների (հատկապես Շեդրոպականի) և առանձին լեզվաբանությունների պատմության շարադրանքները: Իմն մի կողմ թողնենք զանազան համեմատական ու պատմական քնն-կանությունների, լեզվի պատմության և մասնագիտական ֆիլոլո-գիայի ենթաօբյեկտների շարադրանքների մեջ տեղ տրված համառոտ որվագծերը, որոնց ստակ թվարկումը մեզ շատ հետա կտաներ (սրանցից արժե հիշատակել Ա. Մելիքի «Շեդրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներաօբյեկտնա գրքի սշամե-մատական քննականության զարգացման սրվագիծը»)<sup>1</sup>, ապա առա-ջին հերթին կարևոր է նշել Շեդրոպական լեզվաբանությանն ու նրա պատմությանը նվիրված այնպիսի մեկադրություններ, ինչպի-սիք են Բ. Գեյրրյուկի «Լեզվի ուսումնասիրության ներաօբյեկտներ», որը հետադարձ հենթորկվել է արմատական զերամշակման և հրա-տարկվել «Շեդրոպական լեզուների ուսումնասիրության ներաօբ-յեկտնա խորագրով, Բ. Մյարիյնների «Շեդրոպական լեզվաբանության ուսումնասիրության ներաօբյեկտներ»<sup>2</sup>, սովետական իրականության մեջ՝ Ա. Վ. Գեննիցկայայի «Շեդրոպական լեզուների ցեղակցու-թյան ուսումնասիրության հարցերը»<sup>3</sup> և այլն: Շեդրոպական լեզվա-բանության նվաճումների ամփոփմուն՝ նման կարգի առաջին փոր-ձերից մեկն է Էդել հայ լեզվաբան Ս. Տերփիշյանի «Շեդրոպական նախադրուկ» (Կ. Պոլիս, 1885), Ավելյուրգ ենք համարում մեկ ուս-

<sup>1</sup> A. Melikian, Introduction à l'étude comparative des langues in- do-européennes, Paris, 1941 (տես. Թարգմ. Ա. Մելիք, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1953).

<sup>2</sup> B. Delbrück, Einführung in das Sprachstudium, Leipzig, III Bände, 1892 (տես. Թարգմանությունը Շ. Կ. Եսևի-ժ, «Очерк истории языковедения в России» серия, СПб., 1904): Einführung in das Studium der indogermanischen Sprachen, VI Bände, Leipzig, 1919. E. Schmalstieg, Einführung in das Studium der indogermanischen Sprachwissenschaft, Heidelberg, 1921.

<sup>3</sup> А. В. Делюккая, Вопросы изучения родства индоевропей- ских языков, М.—Л., 1957.

մեկ թվարկել է մյուս ժառանգի լեզվաբանությունների պատմությանը նվիրված գործերը, որոնք անհրաժեշտության դեպքում կհիշատակվեն նեղիկ աշխատության համապատասխան հատվածների ծանոթագրություններում և բիրտիոգրաֆիական ցանկերում: Պետք է նշել, որ հեղերուպական լեզվաբանության վերաբերյալ պատմական և բիրտիոգրաֆիկ կարևոր տեղեկություններ տրված են «Grundriss der indogermanischen Sprach- und Altertumskunde» շարքում՝ «Հնդեվրոպական լեզվաբանության պատմությունը՝ Քուպիկ կողմից երա հիմնադրվելուց սկսած» ընդհանուր խորագրով:

Հեղերուպական առանձին լեզվաճյուղերի և լեզուների ուսումնասիրության պատմությանը նվիրված աշխատություններից հիշատակելի են Բ. Թաունսերի «Գերմանական ֆիլոլոգիայի պատմությունը», Բ. Բորդանի «Իտալական լեզվաբանություն և երաժշտությունը», Վ. Վ. Վիտգրադովի «Ժամանակակից ուսաց լեզու աշխատության 1-ին պրակը (Իտալի ընդհանրական ուսմանի ներածություն)», Պ. Ա. Եսուպի «Հայերենի ուսումնասիրությունը միջրասյայում», Յ. Կարստի «Հայկական ֆիլոլոգիայի պատմությունը», Է. Ք. Ադալյանի «Հայ լեզվաբանության պատմությունը» (Ի. Արևան, 1958) և այլն:

Որոշ հեղինակներ ընտրել են յուրատեսուկ ուղի. երանք տալիս են լեզվաբանական գիտության դարգուցման պատմությունը այս կամ այն երկրում՝ նկատի առնելով ոչ միայն տվյալ լեզվի ուսումնասիրությունը, այլև այդ երկրի լեզվաբանների արծարծած այլ հարցերը: Որոշ աշխատություններ էլ զուպարդում են երկու սկզբունքները՝ տալով տվյալ երկրի լեզվաբանության պատմության հետ միտան նաև տվյալ լեզվի ուսումնասիրությունը այլ երկրներում: Այս կամ այն երկրի լեզվաբանության պատմությունը նվիրված աշխատություններից կարելի է նշել Թ. Քենֆելդի «Գերմանիայի լեզվաբանության և արևելյան ֆիլոլոգիայի պատմու-

<sup>1</sup> Geschichte der indogermanischen Sprachwissenschaft seit ihrer Begründung von Fr. Bopp, Strassburg, 1916 - 1936.

<sup>2</sup> R. Kuhnert, Geschichte der germanischen Philologie, München, 1970. I. Loidon, Introduction à l'étude linguistique romane, Paris, An Introduction to Romance Linguistics, London, 1937. В. В. Виттгерас, Современная русская грамматика, том I. Грамматическое учение о языке, М., 1946. G. A. Schramm, The study of Armenian in Europe, «L'Arménie», 1891 լայն լուստած և վերանշարժած հրատարակչությունների և այլ լեզու և առնեապարհան լ'Արմենիա, Վենետիկ, 1903 թ. J. Karat, Geschichte der armenischen Philologie, 1900.

թյանը, որ սեփ նաև մինչև ՃՃՃ դարի լեզվաբանության պատմու-  
թյանը նվիրված ընդհանուր ներածական ծառ, Կ. Եպեթսի «Հնգի  
բուրական» լեզվաբանությունը երթաքերականներից մինչև առաջին  
ամառյանը՝ այնի պատմությունը, Խ. Կ. Քուրիշի «Թուրանական լեզ-  
վաբանության պատմության ուղեգրեր», սովետական իրականու-  
թյան մեջ՝ Ն. Խ. Չևոթյանովի «Համեմատական լեզվաբանությունը  
Թուրանական» աշխատությունը (չերպանցապես թուրք լեզվի  
համեմատական ուսումնասիրության նորոգիչը)՝ և այլն:

Լեզվաբանության պատմության հաջգետին նվիրված մենա-  
դրույուններն ու նորվածները. Հակայական թիվ ևե կադմուս այն  
մենագրություններն ու հոդվածները, որոնք նվիրված են այս կամ այն  
լեզվաբանական ուղղության. այս կամ այն լեզվաբանի հայացք-  
ների ու պոետանությունների, այս կամ այն հարցի ուսումնասիրության  
պատմությունը: Արանց որ միայն մատրաման, այն նույնիսկ  
ամենահամառոտ թվարկումը՝ հնարագոր լի, մատայանդ ևթև նկատի  
ստաննք, որ յուրաքանչյուր հետադասող այս կամ այն մասնակի  
հարցի քննության կապակցությամբ սովորաբար տեսրայտանում է  
ուվայն հարցի պատմությունը, և որ գրեթե յուրաքանչյուր թարգման-  
յալ լեզվաբանական աշխատության հեղինակ բնավադրման է նե-  
թարկվում թարգմանության ստարարանում: Լեզվաբանական դա-  
նասան մենագրությունները. նորվածները և ձեռնարկների ցանկերը  
տրվում ևե պանազան բրբրիոգրաֆիկ աշխատություններում, լեզ-  
վաբանական պարբերականներում, դրադարանային բրբրիոգրաֆիկ  
տեղնկատուներում: Ըստ հնարագորության, կարևորության և սե-  
նրածեղանության՝ լեզվաբանական եման մենագրություններն ու  
հոդվածները հհրջատակվեն ներկա աշխատության համապատաս-  
տան բաժինների համար հանձնարարվող գրականության ցանկե-  
րում:

<sup>1</sup> Th. Benfey, Geschichte der Sprachwissenschaft und orientali-  
schen Philologie in Deutschland, München, 1869, P. 319 ff. Die „indoger-  
manische“ Sprachwissenschaft von den Junggrammatikern bis zum ersten  
Weltkriege. „Lexis“, 1, 1948 (սուս. թարգմ.՝ Բ. Սոչոտ, „Индоевропей-  
ское“ языкознание от младограмматиков до первой мировой войны.  
„Общее и индоевропейское языкознание“, М., 1956, էջ 28-44). С. К.  
Буднич, История языкознания в России, СПб, 1904, Н. С. Чешода-  
ков, Сравнительное языкознание в России, М., 1956.



## 2. ԼԵԶՎԱԲԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԿՐԻՒԹՅԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ

Լեզվաբանության պատմության տեսլիցյան պեժոյիգա-  
ցիան. . Լեզվաբանութեան պատմարանի գլխավոր խեղճրներից Մե-  
կը գիտական պեժոյիգապիտայի և նյաթի պիտեմապիտման ու-  
ցիանայ երանակների մշակումն է: Մակայն այս խեղճրը չուծված  
համարել չի կարելի: Տրաղիցիոն կերպով լեզվաբանութեան պատ-  
մութեանը բաժանում են երկու շրջանի՝ նախադիտակաևս և դիտա-  
կաևս: Այս բաժանման համար չիմք է ժառայում այն փաստը, որ  
մինչև XIX դ. լեզվաբանութեանը սրպես առանձին գիտութեան չէր  
հնապարել, այլ գոյութեանս սեկը մասամբ քերականութեանն ու  
բառարանագրութեանն ձևով: մասամբ էլ՝ փոխազգայական, ֆիլոլո-  
գիական և մարտաստեական ուսմունքների մեջ, այսինքն՝ լեզվի  
ուսումնասիրութեան բոլոր բնագավառները չէին միավորվել մի  
բնդ՝անոթը անվան տակ: XIX դ. լեզվաբանութեան տարերը բնա-  
գավառները միավորվում են սրպես մեկ գիտութեան: Այս հետ  
միասին սովորաբար մատնանշում են, որ այս երկու շրջանների  
առանձնացման պիտավոր չիմքք XIX դ լեզվի նկատմամբ պատ-  
մական մոտեցման առաջացումն է, մի բան. որ մինչև այդ յոկ  
սայմնավորվում էր:

Լեզվաբանութեան պատմութեան այս տրադիցիոն պերիոդիգա-  
ցիան, որ համապատասխան անվանումներով կամ առանց դրանց  
բնդանվում է պեժի բոլորի կողմից, չի կարող չհանդիպել մի շարք  
ստարկութեաններ:

1) Նախադիտակաևս և պիտակաևս անվանումները ինքնին  
անհարկ են միշտ է. այդ անվանումները գործածվում են  
սչ այն իմաստով. թե մինչև XIX դ լեզվի պիտակաևս ուսում-  
նասիրութեան բնդ՝անոթապես գոյութեան չուներ, այլ ելվում է, որ  
այդ ուսումնասիրութեանը դեռևս սրպես մի միտանակաևս, մշտա  
գիտութեաններից ա պիտպիլիներից անկախ բնագավառ գոյու-  
թեան չուներ: Բայց և այնպես՝ այդ անվանումները թշտարմացու-  
թեանների անդիք են տալիս:

2) Այս պեժոյիգապիտայի գրեթե տարերայնորեն պարժուտութեան  
մեջ է մտել XIX դարում, կրք միտի պիտակաևս հայեցակետը նա  
մարվում էր պատմականը և, նուեայտը, սոք նախորդ շրջանը չէր  
արժևապարգիվում սինպես, ինչպես պետք է: Իրականում՝ մինչև  
XIX դ. լեզվի ուսումնասիրութեանը մեծ առաջադիմութեան էր կա-

առաքել Խոսեանձին յնպանների աստաթիկ վերլուծութիւնն անպրօնքների մշտեման ուղղութիւնումը, մշտեմիչ էին չեզզի կատարեցմանքի վերլուծութիւնն ու նշութի սիտանմաւորման աշխարհիւն եղանակներ, որոնք կիրառվում էին իրենց իսկ՝ պատմա-համեմատական չեզզարար-նութիւնն իմաստգիրներին ու երկնայաբացուցիչներին կողմից: ՄԱ դարում, երբ սկսում են ձայներ շարիչ ՄԱ դարին միակերպաննի պատմականաւթիւնն դեմ, երբ չեզզի ռուսամեասիրութիւնն մեթոդների մէջ զգալի առաջնութեաց է կատարվում, աշխուսմեանայնիմ, շարունակում են անքննադատ ոգուազորելի ինչչայ պերիօդիզացիան. ՄԱ դարում չեզզի ռուսամեասիրութիւնն բնապաւանների չոկ մեխանիկական միակերպում է կատարվում. նախ՝ քերականութիւնը շարունակում է անկախ զարգացում սուրբն և ոգովի նախքան ՄԱ դարը մշակված վերլուծութիւնն եղանակներով և սիտանմաւորման անպրօնք ներսով՝ Նանդեա փայով իտալական ցարդացական քերականութիւնն անկախ տակ, երբ մեջ շարունակում են բերվել նաև աշխարհի գիտելիքներ (նշանաբանութիւնն, սոցիալութիւնն, բաստիօտութիւնն և իմաստարանութիւնն տարբեր և սլլի), որոնք չեզզի քերականական կատարեցման չեզ վերաբերում, պատմա-նամեմատական չեզզարանութիւնն ներկայացուցիչները իրենց իտալութիւնն արդիւնքները ամփոփում են ռուսամեասական քերականութիւնն և պատմական քերականութիւնն անունների տակ՝ քերականութիւնն բարի միեննայն նամապարգիակ քմուսմամը. երկրորդ՝ չեզզական իտալերը շարունակում են քննիչի նաև սլլ գիտութիւնների և գիտական գիտելիքներին կողմից, չեզզի ռուսամեասիրութիւնն բարի յնապաւանների չեզզատար աստանմացում տեղի չի ունենում. գեղ սլլիչի, չեզզական գիտութիւնն ձեւավորման նեւ միտսին չեզզական նարդերը դատում են այն գիտութիւնն երկնայաբացուցիչների հոգամու ռուսամեասիրութիւնն տարեկան և սլլում չեզզարանութիւնն վրա:

Յ) չեզզարանութիւնն սրգեա տեղաբի գիտութիւնն յիտալատար նեւավորում և աստանմացում ՄԱ դարում տեղի չի ունենում չեզզարանութիւնն գրա իրաւ կիրպով սլլում են, մի կողմից, բնական գիտութիւնները, Նամակապեա բիւրդգիան, սլլա կողմիչ՝ չեզզարանութիւնը, սրանց ռուսամեասիրութիւնն մեթոդները մեխանիկորեն տեղափոխվում են չեզզարանութիւնն բնապաւանոր: Այն միչնչե ՄԱ դարը չեզզական ռուսամեասիրութիւնն շատ նարքեր կազմում էին փիլիսոփայութիւնն, Ֆիլոզոփայի և ճարտարանութիւնն տնօրինութիւնը, տղա ալս շրջանում էլ չեզզարանութիւննը գիտվում է

կամ որպէս բնակիչն գիտութիւններն մի մասը, կամ որպէս 'նպե-  
տանութեան յուրատեսակ կցորդը:

Ճշ վերջապէս, այս բոլորին միանում է և ուշ, ու չէ՛ղ ցարում  
լեզվաբանական գիտութեան մեջ արժատեսական փոփոխութիւններ  
են կատարուում: Կարելի է տեսլ, ու իսկական ընդհանուր լեզվա-  
բանական հաշտեցականը մշակում է ՎՃ ցարում, իրը շանքեր են  
արվում վերաջնելու ի՛նչ զ. լեզվաբանութեան ռահմատեսական  
թշուհները՝ միտկողմանիորեն տարվելը պատմա-՛նամեմատական  
հետազոտութեամբ և լեզվաբանութեանը որպէս կարելու բնադա-  
վառ դիտելը: Իհարկէ, այս հարցի լուծման մեջ քիչ չեն ծայրա-  
հնդութիւնները, որոնք պատմական որոնումների հետազոտորին  
լիովին հասկանալի են:

Ի՞նչ պերիոդիզացիայի շարքում գոյութեան ունի քիչ թիւ շու-  
սիտանականութեան. առաջ այդ բանը չի կարելի տեսլ նշանի սիս-  
տեմատորման հարցի մասին. ոմանք երկվիք սիտեմատորում են  
բառ հնդինականի, ոմանք՝ ըստ ուղղութիւնների (այն էլ ոչ ստունդ  
մասնականացական խտրութեանները), ոմանք՝ ըստ լեզվաբանու-  
թեան յաժմանի որ դիտելիքներն. ոմանք էլ՝ ըստ տվյալ շրջա-  
նում 'տեսլու են կամ կարենարգուլի պորթլեմների և այլն: Այսպի-  
սով, բոլոր դեպքերում էլ գոհացողիչ ու որոշակի սկզբունքներ չեն  
մշակվում: Արդարութեաններն առանձնացում են հիմքում գրվում են  
տարրեր սկզբունքներ՝ մերթ լեզվաբանական կոնցեպցիայի և մե-  
թոդի բնագավառում հանդէս են կաթ տարբերութեանը՝ 'նամուղտ  
տարբան տնամտումներով հանդերձ, մերթ էլ այլ կարգի 'տարկա-  
նիչներ՝ դրանց համապատասխան այլ անվանումներով. այսպէս՝  
նուտարալիզմ, պսիխոլոգիզմ, սոցիոլոգիզմ և այլ 'տնամտումների  
կոնցեպտ. որոնք բնորոշում են լեզվի ըմբռնումը, հանդիպում են և  
այնպիսի հորջորումներ, ինչպիսիք են երիտքերականիք, ժենի  
դպրոց, կազանի դպրոց, Մանկավարչի դպրոց և այլն: Քննարկվող  
լեզվաբանների բնորոթեան 'տրցում! ոչ միշտ են դեր խաղում՝  
օրինակով շափանիչները: Իհարկէ, բոլոր դեպքերում չէ, որ հեա-  
րազոր է գիմել միասնական սկզբունքներ, մասնականացրական  
խախտումներ թույլ յատ, տրայիցիտն անվանումները հաշտի շառ-  
ենլ և այլն. բայց այս բոլոր դեպքերը կարելի է հասցնել միեմու-  
մի, եթէ հանդէս բերվի իրական պատմականութեան և 'հետազոտ  
կանութեան:

Լեզվաբանութեան պատմութեան՝ ենդկա աշխատութեան մեջ  
